ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/200

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.07.2021թ. թիվ 26/26-1/12073-2021 գրությամբ Ա/Ձ Արմեն Հասանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 21.07.2021թ. թիվ 09/1119 գրության հիման վրա 28.07.2021թ. թիվ 26/26-1/12073-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արմեն Հասանյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արմեն Հասանյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արմեն Հասանյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 04.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.07.2021թ. թիվ 09/1119 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Արմեն Հասանյանը:

Սույն թվականի հուլիսի 12-ին գնահատող հանձնաժողովի թիվ 6 որոշմամբ Ա/Ձ Արմեն Հասանյանը ճանաչվել է՝ 7, 25, 34-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն անգործության ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հուլիսի 19-ին, ընթացակարգի քարտուղարի կողմից ընտրված մասնակցին պետք է ծանուցվեր և ներկայացվեր պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնի պայմանագրի և որակավորման ապահովումները:

Սակայն ս.թ. հուլիսի 13-ին Ա/Ձ Արմեն Հասանյանի կողմից ստացվել է գրություն, համաձայն որի մասնակիցը հրաժարվում է ստորագրել պայմանագրի նախագիծը վերը նշված չափաբաժինների մասով:

Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Ա/Ձ Արմեն Հասանյանի հայտը մերժվում է և որպես ընտրված մասնակից զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային

օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկվում են լիազոր մարմին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 04.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմեն Հասանյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արմեն Հասանյանը Ընթացակարգի 7-րդ, 25-րդ և 34-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Ա/Ձ Արմեն Հասանյանը «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 13.07.2021թ. գրությամբ մասնավորապես հայտնել է, որ հրաժարվում է որպես ընտրված մասնակից պայմանագիրը կնքելուց:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Արմեն Հասանյանը ներկայացրել է դիմում, որի համաձայն՝ վերջինս հրաժարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցությունից և որպես ընտրված մասնակից պայմանագիրը ստորագրելուց, ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Ա/Ձ Արմեն Հասանյանի հայտը մերժվում է և որպես ընտրված մասնակից զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.07.2021թ. թիվ 26/26-1/12073-2021 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 21.07.2021թ. թիվ 09/1119 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմեն Հասանյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արմեն Հասանյանը Ընթացակարգի 7-րդ, 25-րդ և 34-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

<u>Ա/Ձ Արմեն Հասանյանը «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 13.07.2021թ. գրությամբ մասնավորապես հայտնել է, որ հրաժարվում է որպես ընտրված մասնակից պայմանագիրը կնքելուց:</u>

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Արմեն Հասանյանը ներկայացրել է դիմում, որի համաձայն՝ վերջինս հրաժարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցությունից և որպես ընտրված մասնակից պայմանագիրը ստորագրելուց, ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Ա/Ձ Արմեն Հասանյանի հայտը մերժվում է և որպես ընտրված մասնակից զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝ ***<u>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>***

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Արմեն Հասանյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, ***<u>քանի որ գնահատող հանձնաժողովի 12.07.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն Ա/Ձ Արմեն Հասանյանը ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 13.07.2021թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է որպես ընտրված մասնակից պայմանագիրը կնքելուց:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.07.2021թ. թիվ 26/26-1/12073-2021 գրությամբ Ա/Ձ Արմեն Հասանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արմեն Հասանյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**